ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԿԱՀՈՒՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/13-2

ք. Երևան «28» հոկտեմբերի 2016թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Գ.Պետրոսյանի, որը գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Ֆոտոն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Պետրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և նախատեսված ժամկետներում՝ Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրիր-գնման ժամանակացույցով նախատեսված գրասենյակային կահույքը /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրիր-գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **8 988 656 (ութ միլիոն ինը հարյուր ութսունութ հազար վեց հարյուր հիսունվեց)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2016 թ.:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Յուրաքանչյուր ապրանքատեսակի երաշխիքային ժամկետին ներկայացվող պահանջները ներկայացված են Պայմանագրի N 1 հավելվածում::

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (Հավելված N 3) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 **Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:**

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ

համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Ֆոտոն» ՍՊԸ
ք. Երևան, Մովսես Խորենացու 3	ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյանի
ՀՎՀՀ 02647057	փող. շ. 14, բն.21
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
վարչություն Հ/Հ 900013202016,	Հ/Հ 16044050085000
Հ/Հ 900013574018	ՀՎՀՀ 90036001
ՀՀ ԿԱ պետական եկամուտների	Տնօրեն՝
կոմիտեի աշխատակազմի ղեկավարի ժ/պ	
Գ. Պետրոսյան (ստորագրություն)Կ.Տ	*Ե. Պետրոսյան* (ստորագրություն)Կ.Տ

Հավելված N 1
«28» հոկտեմբերի 2016թ. կնքված
N ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/13-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ապրանքի*							
	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափի միավոր	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	մատակարարման վայրը	մատակարարման ժամկետը	երաշխիքային ժամկետ
1	**գրասեղաններ 1**	Լամինացված վերնաշերտով: 120*70 սմ չափերի: Փայտե ոտքերով: Սեղանի բարձրությունը 40 սմ: Յուրաքանչյուր դետալի բաց եզրերը պետք է պատված լինեն առնվազն 0.4մմ հաստությամբ պոլիվինիքլորիդային /PVC/ թերմոպլաստե եզրաշերտով, իսկ դիմային մասի եզրը՝ ՓՄՍ/МДФ/ պրոֆիլով:	հատ	3	14764	2 հատ- ՀՀ ԿԱ ՊԵԿ ք.Երևան Մ.Խորենացու3, 7 1 հատ- Ք.Իջևան Անկախության 12	Մատակարարումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	Ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր
2	**գրասեղաններ 2**	Սեղան լամինացված ՓԹՍ/ДСП/-ից, հաստությունը առնվազն 18մմ, մուգ գույնի, մեկ կողում՝ դարակներով՝ հոլովակների վրա, ձախից՝ հարկաբաժիններ համակարգչի տարբեր մասերը տեղադրելու համար: Սեղանի չափերը 200*80*75սմ	հատ	3	31236.67	2 հատ-ՀՀ ԿԱ ՊԵԿ ք.Երևան Մ.Խորենացու3, 7 1 հատ- Ք.Իջևան Անկախության 12	Մատակարարումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	Ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր
7	**խորհրդակցությունների սենյակի կահույք 2**	Խորհրդակցությունների սեղան: Սեղան առանց դարակաշարի, շագանակագույն: Չափերը 300*150*75սմ, 2 կտորից, լամինացված առնվազն 30 մմ հաստությամբ ՓՄՍ /МДФ/-ից, եզրերը՝ 40մմ հաստությամբ շագանակագույն փայտե պրոֆիլներով	հատ	3	114762	ՀՀ ԿԱ ՊԵԿ ք.Երևան Մ.Խորենացու3, 7	Մատակարարումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	Ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր
12	**սեղան՝դիմադիր 2**	Դիմադիր լամինացված ՓԹՍ/ДСП/-ից, հաստությունը առնվազն 18մմ, մուգ գույնի, 90*55*70սմ: Յուրաքանչյուր դետալի բաց եզրերը պետք է պատված լինեն առնվազն 0.4մմ հաստությամբ պոլիվինիքլորիդային /PVC/ թերմոպլաստե եզրաշերտով, իսկ դիմային մասի եզրը՝ ՓՄՍ/МДФ/ պրոֆիլով:	հատ	12	8798	7 հատ- ՀՀ ԿԱ ՊԵԿ ք.Երևան Մ.Խորենացու3, 7 5 հատ- Ք.Իջևան Անկախության 12	Մատակարարումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	Ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր

13	**սեղաններ 4**	Կողադիր լամինացված ՓԹՍ/ДСП/-ից, հաստությունը առնվազն 18մմ, մուգ գույնի, 100*55*60սմ:Յուրաքանչյուր դետալի բաց եզրերը պետք է պատված լինեն առնվազն 0.4մմ հաստությամբ պոլիվինիքլորիդային /PVC/ թերմոպլաստե եզրաշերտով, իսկ դիմային մասի եզրը՝ ՓՄՍ/МДФ/ պրոֆիլով:	հատ	51	9338	46 հատ- ՀՀ ԿԱ ՊԵԿ ք.Երևան Մ.Խորենացու3, 7 5 հատ- Ք.Իջևան Անկախության 12	Մատակարարումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	Ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր
16	**գրապահարան ներ 3**	Լամինացված ՓԹՍ/ДСП/-ից, հաստությունը առնվազն 18մմ, մուգ գույնի: 120*45*210սմ չափսերով, Վերևի մասը՝ 4 հարկ դարակներով և փակվող ապակե դռներով /առնվազն 33սմ դարակի բարձրությամբ/, ներքևի մասը 2 հարկ դարակներով և կողպեքով փակվող դռներով: Յուրաքանչյուր դետալի բաց եզրերը պետք է պատված լինեն առնվազն 0.4մմ հաստությամբ պոլիվինիքլորիդային /PVC/ թերմոպլաստե եզրաշերտով	հատ	3	52800	ՀՀ ԿԱ ՊԵԿ ք.Երևան Մ.Խորենացու3, 7	Մատակարարումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	Ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր
17	**գրապահարան ներ 4**	Լամինացված ՓԹՍ/ДСП/-ից, հաստությունը առնվազն 18մմ, մուգ գույնի: 90*45*210սմ չափսերով, Վերևի մասը՝ 4 հարկ դարակներով և փակվող ապակե դռներով /առնվազն 33սմ դարակի բարձրությամբ/, ներքևի մասը 2 հարկ դարակներով և կողպեքով փակվող դռներով: Յուրաքանչյուր դետալի բաց եզրերը պետք է պատված լինեն առնվազն 0.4մմ հաստությամբ պոլիվինիքլորիդային /PVC/ թերմոպլաստե եզրաշերտով	հատ	50	28998	30 հատ- ՀՀ ԿԱ ՊԵԿ ք.Երևան Մ.Խորենացու3, 7 20 հատ- Ք.Իջևան Անկախության 12	Մատակարարումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	Ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր
18	**գրապահարան ներ 5**	Խոհանոցի պահարան: Լամինացված ՓԹՍ/ДСП/-ից, հաստությունը առնվազն 18մմ, մուգ գույնի: 120*70*90սմ չափսերով, վերևում 2 դարակներով, ներքևի մասը փակվող դռնով, 2 հարկ դարակաշարով: Յուրաքանչյուր դետալի բաց եզրերը պետք է պատված լինեն առնվազն 0.4մմ հաստությամբ պոլիվինիքլորիդային /PVC/ թերմոպլաստե եզրաշերտով	հատ	1	34652	Ք.Իջևան Անկախության 12	Մատակարարումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	Ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր

19	**գրապահարանն եր 6**	Խոհանոցի կախովի պահարան: Լամինացված ՓԹՍ/ДСП/-ից, հաստությունը առնվազն 18մմ, մուգ գույնի: 120*45*90սմ չափսերով: 2 դարակներով և 2 դռներով: Յուրաքանչյուր դետալի բաց եզրերը պետք է պատված լինեն առնվազն 0.4մմ հաստությամբ պոլիվինիքլորիդային /PVC/ թերմոպլաստե եզրաշերտով	հատ	3	25568	Ք.Իջևան Անկախության 12	Մատակարարումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	Ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր
21	**արխիվի դարակաշարեր 1**	Լամինացված ՓԹՍ/ДСП/-ից՝ հաստությունը առնվազն 18մմ, միակողմանի դարակաշարով, դարակների միջնամասում 15 սմ բարձրությամբ միջնապատ, յուրաքանչյուր դարակի բարձրությունը 38 սմ: Պահարանի խորությունը 30սմ: Լայնությունը 210սմ՝ բաժանված 3 մասի /3*70սմ/, Ընդհանուր բարձրությունը 320սմ:Հիմքի բարձրությունը 10 սմ: Յուրաքանչյուր դետալի բաց եզրերը պետք է պատված լինեն առնվազն 0.4մմ հաստությամբ պոլիվինիքլորիդային /PVC/ թերմոպլաստե եզրաշերտով	քմ	39.27	10756	Ք.Իջևան Անկախության 12	Մատակարարումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	Ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր
22	**արխիվի դարակաշարեր 2**	Լամինացված ՓԹՍ/ДСП/-ից՝ հաստությունը առնվազն 18մմ, երկկողմանի դարակաշարով, դարակների միջնամասում 15 սմ բարձրությամբ միջնապատ, յուրաքանչյուր դարակի բարձրությունը 38 սմ: Պահարանի խորությունը 60սմ: Լայնությունը 210սմ՝ բաժանված 3 մասի /3*70սմ/, Ընդհանուր բարձրությունը 320սմ:Հիմքի բարձրությունը 10 սմ: Յուրաքանչյուր դետալի բաց եզրերը պետք է պատված լինեն առնվազն 0.4մմ հաստությամբ պոլիվինիքլորիդային /PVC/ թերմոպլաստե եզրաշերտով	քմ	146.2	21154.99	46.2քմ- Ք.Իջևան Անկախության 12 100քմ-Ք.Վանաձոր Մոսկովյան 44	Մատակարարումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	Ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր
23	**սեղաններ 5**	Լամինացված ՓԹՍ/ДСП/-ից, հաստությունը առնվազն 18մմ, մուգ գույնի, 3 դարակներով՝հոլովակների վրա: Չափերը 90*55*60սմ:	հատ	1	16330	ՀՀ ԿԱ ՊԵԿ ք.Երևան Մ.Խորենացու3, 7	Մատակարարումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	Ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր
26	**աթոռ մետաղյա**	Աթոռ գրասենյակային, մետաղական, նստատեղը և հենակը փափուկ: ոտքերի խողովակների պատերի	հատ	340	7298	208 հատ- ՀՀ ԿԱ ՊԵԿ ք.Երևան	Մատակարարումն իրականացվում է	Ապրանքն ընդունվելու

		հաստությունը առնվազն 1.2մմ, սև գույնի: Նստատեղի չափսերը առնվազն 47*42սմ				Մ.Խորենացու3, 7 132 հատ- Ք.Իջևան Անկախության 12	պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	օրվանից հաշված 365 օրացուցային օր
29	**գզրոցներ**	Բարձրություն 60սմ Խորությունը 45սմ Լայնությունը 40սմ Ունի 3 սահող դարակ, պլաստմասե բռնակներ, մեկ փականով, լամինացված ՓԹՍ/ԴՍՊ/-ից :	հատ	16	12000	ՀՀ ԿԱ ՊԵԿ ք.Երևան Մ.Խորենացու3, 7	Մատակարարումն իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 15 օրացուցային օրվա ընթացքում:	Ապրանքն ընդունվելու օրվանից հաշված 365 օրացուցային օր

Մասնակիցը պետք է ներկայացնի ISO 14001 "Էկոլոգիայի կառավարման համակարգ"-ի սերտիֆիկատ՝ գնման հայտում նշված լամինացված ՓԹՍ/ԴՍՊ/-ի արտադրության համապատասխանության վերաբերյալ:

*** Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը իր միջոցներով և իր հաշվին:**

ԳՆՈՐԴ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն Հ/Հ 900013202016,
Հ/Հ 900013574018
ՀՀ ԿԱ պետական եկամուտների
կոմիտեի աշխատակազմի ղեկավարի ժ/պ

Գ.Պետրոսյան _____
(ստորագրություն)Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Ֆոտոն» ՍՊԸ
ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյանի
փող. շ. 14, բն.21
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16044050085000
ՀՎՀՀ 90036001
Տնօրեն

Ն.Պետրոսյան _____
(մտորագրություն)Կ.Տ

Հավելված N 2
«28» հոկտեմբերի 2016թ. կնքված
N ՀՀԿԱ-ՊԵԿ-ԾՀԱՊՁԲ-(16/1)-15/13-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2016 թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	**5122**	**գրասեղաններ 1**	44 292	44 292	44 292	**44 292**
2	**5122**	**գրասեղաններ 2**	93 710	93 710	93 710	**93 710**
7	**5122**	**խորհրդակցություններ ի սենյակի կահույք 2**	344 286	344 286	344 286	**344 286**
12	**5122**	**սեղան՝դիմադիր 2**	105 576	105 576	105 576	**105 576**
13	**5122**	**սեղաններ 4**	476 238	476 238	476 238	**476 238**
16	**5122**	**գրապահարաններ 3**	-	158 400	158 400	**158 400**
17	**5122**	**գրապահարաններ 4**	-	1 449 900	1 449 900	**1 449 900**
18	**5122**	**գրապահարաններ 5**	-	34 652	34 652	**34 652**
19	**5122**	**գրապահարաններ 6**	-	76 704	76 704	**76 704**
21	**5122**	**արխիվի դարակաշարեր 1**	-	422 388	422 388	**422 388**
22	**5122**	**արխիվի դարակաշարեր 2**	-	3 092 860	3 092 860	**3 092 860**
23	**5122**	**սեղաններ 5**	-	16 330	16 330	**16 330**
26	**5122**	**աթոռ մետաղյա**	-	2 481 320	2 481 320	**2 481 320**
29	**5122**	**գզրոցներ**	-	192 000	192 000	**192 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

ԳՆՈՐԴ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն Հ/Հ 900013202016,
Հ/Հ 900013574018
ՀՀ ԿԱ պետական եկամուտների
կոմիտեի աշխատակազմի ղեկավարի ժ/պ

Գ.Պետրոսյան (ստորագրություն)Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Ֆոտոն» ՍՊԸ
ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյանի
փող. շ. 14, բն.21
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16044050085000
ՀՎՀՀ 90036001
Տնօրեն՝

Ն.Պետրոսյան (ստորագրություն)Կ.Տ

Հավելված 3
«22» հոկտեմբերի 2016թ. կնքված
N ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/13-2 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«28» հոկտեմբերի 2016թ. կնքված
N ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԱՊՁԲ-(16/1)-15/13-2 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն